

ՏԻԿԻՆ ԱՐԵՒ ՄՈՒՏԵԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՏՔԹ. ՀՐԱՉ ԶԻԼԻՆԿԻՐԱՆ (*)

Արեւմտահայերէնի պահպանման եւ կենսունակութեան շուրջ յառաջացած մարտահրաւէրները աւելի ու աւելի հրատապ դարձած են վերջին տասնամակնին: Յատկապէս, երբ ԻՒՆԷՍԻՔՕ-ն 2010-ին արեւմտահայերէնը դասեց «վտանգուած» լեզուներու կարգին, սփիւռքի մէջ անոր ապագան դարձաւ գլխաւոր քննարկման նիւթ: Համայնքային առաջնորդներ, դաստիարակներ, մասնագէտներ եւ աւագները սկսան միջոցներ եւ ծրագրեր որոնել՝ դիմագրաւելու լեզուի անկումը:

Անշուշտ, այս խնդիրը միայն լեզուի կորուստի մասին չէ. ան մաս կը կազմէ աւելի խորքային առաջադրանքի մը՝ կապուած ինքնութեան պահպանման հրամայականին՝ Համաշխարհայինցման, դադթի եւ ձուլման ճնշումներուն տակ, որոնք շարունակ կը ձեւաւորեն սփիւռքի հայ իրականութիւնը:

Արեւմտահայերէն խօսողներու նուազող թիւէն բացի, քանի մը այլ գործոններ եւս պատճառ կը դառնան անոր աստիճանական անկման: Օրինակ՝ Հայերէնը սկսած է դադրի վարչական գործունէութեան լեզու ըլլալէ սփիւռքեան բազմաթիւ կազմակերպութիւններու համար: Նոյնիսկ Լիբանանի մէջ, շատ անգամ ձեռնարկներու յայտարարութիւնը անգլերէն լեզուով կը սփռուի հանրութեան: Շատ տեղեր ա-

րեւմտահայերէնը խորհրդանշական դարձած է, որովհետեւ սփիւռքեան բազմաթիւ կազմակերպութիւններ կը գործեն երկնշջու ձեւով: Միեւնոյն ատեն, արեւմտահայերէն թերթներն ու մամուլը, որոնք երկարատեն սփիւռքի մէջ լեզուական կենսունակութեան հիմնասիւններէն եղած են, օրէ օր կը տկարանան: Օրաթերթները ընթերցողներ կը կորսնցնեն, կը տառապին ելմտական սահմանափակումներէ եւ բովանդակութիւն արտադրելու հակադարձ մարտահրաւէրներէ: Այսօր, ամբողջ սփիւռքի մէջ միայն փոքր թիւով արեւմտահայերէն օրաթերթի մը շաբաթաթիւ կը շարունակեն հրատարակուիլ՝ մեծ մասամբ թուային եւ հազուադէպ տրպագիր տարբերակով:

Արեւմտահայերէնի այժմու վիճակը եւ «լուծումներու» մօտեցումները պատկերացնելու համար, փորձենք երեւակայել պայմանական տիկին Արեւ Մուտեան մը՝ ժամանակին չորուն ու վառ կին մը, որուն զաւակները անվերջ կը վիճին, թէ ինչպէս կրնան խնամել զինք: Կան տարբեր խումբեր, որոնք կը հռչակեն կամ մտահոգ են անոր ճակատագրով:

1. ՄԱՔՐԻՍՏԻՆԵՐԸ («PURIST»ՆԵՐԸ) Առաջին խումբը կը կազմեն մաքրակրօնները՝ արեւմտահայերէնի ինքնակոչ պաշտպանները, մարտիկներն ու ոստիկանները: Այս մտաւորականները մեծ մասամբ Միջին Արեւելքի սփիւռքեան միջավայրին մէջ թրծուած են: Անոնք կը տես-

նեն իրենց առաքելութիւնը՝ որպէս «սուրբ պարտաւորութիւն» մը՝ պաշտպանելու եւ պահպանելու լեզուն «արեւան միջնա վերջին կաթիլը»:

Այս խումբին համար տիկին Արեւին վիճակը չափազանց ծանր է: Ան կը գտնուի հիւանդանոցի յատուկ վերականգնացման բաժանմունքին մէջ, շնչառական խողովակի մը միացուած, գրեթէ հոգեվարքի մէջ: «PURIST»ները կը զանգատին անտարբերութենէն սփիւռքեան հաստատութիւններու, որոնք, ըստ իրենց, ծախողած են զայն «փրկելու»: Անոնցմէ շատեր կը հաւատան, թէ Հայաստանի Հանրապետութիւնը կրնայ ըլլալ վերջին յուր: Բայց, զնահատելով հանդերձ անոնց մեծ նուիրումը՝ շատ գործնական լուծումներ չունին: Դպրոցներու եւ ուսուցիչներու զանաւորումը - այսինքն՝ «հիւանդանոցն ու բուժօրդերը» - անբաւարար է: Անոնց պատասխանը հիմնականին մէջ պաշտպանողական է՝ պահել արեւմտահայերէնը այնպէս, ինչպէս որ էր անցեալին՝ ըստ իրենց պատկերացումին: Անոնց համար իսկական հայր ան է, որ ամբողջովին կը նմանի տիկին Արեւին՝ այնպէս ինչպէս եղած էր ան անցեալին՝ անփոփոխ եւ գերծօտար ազդեցութիւններէ:

2. «ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ԽՄԱՐԱԿԸ» Ժնշող հակառակ ուղղութեամբ կը գտնուի աւելի ազատ եւ լայնախոհ մտաւորական խումբ մը՝ յառաջդէմ, աշխարհիկ, խորապէս կրթուած արեւմտահայերէնի գրական եւ փիլիսոփայական աւանդութեանց մէջ: Անոնց մտածողութիւնը եւ

ուղադրութիւնը յաճախ կը կեդրոնանայ մեր ժամանակներու երկու-երեք մեծ գրական եւ մտաւորական նշանաւոր դէմքերու վրայ:

Այս խումբին համար տիկին Արեւը մահամերձ չէ. ան ուղղակի կը ծերանայ ժամանակի եւ հանգամանքներու ազդեցութեամբ: Ան հիւանդանոցի կարիք չունի, բայց, պէտք ունի նուր, սիրառատ խնամքի՝ ուղադրութեան իր հասուն զաւակներուն, որոնք տակաւին տան մէջ կը խօսին իր հետ:

Այս խումբին հետեւեալը վերկենսաւորում է. մշակութային է, ոչ բժշկական: Այս խումբը չեղար կը դնէ գրականութեան, ինքնաքննութեան եւ փիլիսոփայական նորոգութեան վրայ, բայց, անոր ազդեցութիւնը կը մնայ նեղ շրջանակներու մէջ՝ հազուադէպօրէն շփուելով մաքրակրօններու կամ այլ յարակից մասնագէտներու հետ:

Նշուած երկու խումբերն ալ, ի վերջոյ, հակադիր խրատաւորներու մէջ կը գտնուին՝ իրաքանչիւրը համոզուած, թէ ինք միայն գիտէ տիկին Արեւը փրկելու ձեւը:

3. ՆՈՐ ՄԵՐՈՒՆԵՐԸ Այս երկու խումբերուն միջեւ կանգնած է նոր սերունդ մը՝ տարբերով քսանէն երեսուններու միջեւ հայ երիտասարդներ, որոնք կը փորձարկեն նոր ձեւեր կենսունակ պահելու արեւմտահայերէնը: Անոնք ոչ մաքրակրօն են, ոչ ալ աւանդապաշտ մտաւորականներ: Անոնց նուիրումը տիկին Արեւին նկատմամբ անկեղծ է, բայց, գործելակերպը՝ ստեղծագործական, եր-

բման խաղով ու արդի:

Այս սերունդը լեզուին հանդէպ իր սէրը կը ցուցաբերէ թուային մշակոյթով՝ փոթքեթներ, YouTube ալիքներ, memes, առցանց հարթակներ եւ քննարկային ցանցեր: Հաստատութեանական իշխանութիւն չունի, բայց, ունի տեսանկիւնութիւն, աշխուժութիւն եւ բնագրային գիտակցութիւն, թէ արեւմտահայերէնը պէտք է ապրի այնպէս, ինչպէս որ ան է այսօր, ոչ թէ ինչպէս որ եղած էր:

Անոնց համար տիկին Արեւը մեծ մայր մըն է՝ դուցէ թող, բայց սիրելի: Ան կարօտ է մտերմութեան՝ աւելի քան պաշտպանութեան, աւելի զրոյցի՝ քան սուգի: Թէ արդեօք այս սերունդը պիտի կարողանայ՝ երկարաժամկէտ ազդեցութիւն մը ունենալ կրթական կամ համայնքային կեանքի մէջ՝ տակաւին յստակ չէ: Բայց, անոր ներկայութիւնը, անշուշտ, նոր շունչ մը բերած է արեւմտահայերէնի ողիսականին:

4. ՈՒՍՈՒՅԻՆՆԵՐԸ Եւ կան ուսուցիչները՝ լեզուի ամենօրեայ պահպանները սփիւռքեան դպրոցներուն մէջ: Անոնք կը տարբերին բնաւորութեամբ՝ ոմանք խիստ պահպանողներ են, ուրիշներ՝ բաց քննարարութեան: Շատեր յաճախ կը գտնուին երկմտանքի մէջ՝ մաքրակրօններու պաշտպանողական դիրքին եւ մտաւորականներու մշակութային մօտեցումին միջեւ եւ, միաժամանակ, կը փորձեն կապ հաստատել նոր թուային սերունդին հետ:

● շար. Դ. ԷՂ

ՈՒՐԲԱԹ

14

ՆՈՅՆԵՄԲԵՐ

2025

ԹԻՒ. (SAYI) 13918

ԳԻՆ

10 ԼԻՐԱ

JAMANA K

ՄԻՋԱԿԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

ՕՐՈՒՄԱՆ ՍՏՈՐԻՍՆԵՐ

ԱՄՆ-Զինատան յարաբերութիւնները՝ համաշխարհային մոլ կարգի գլխաւոր առանցքը կը կազմեն (2)

ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐՈՒ ՊԱՏՈՒՀԱՆԸ

Միլիտանտեր Ռէյ Տալիո հնդկաստանի որդեգրելիք հաւանական ուղղութիւնը որոշիչ կը համարէ ապագայի համար

ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

Ամերիկայցի միլիտանտեր Ռէյ Տալիո կը շեշտէ, որ Զինատանի մէջ մէկ շունչին եկանաւորութիւնը 26 անգամ աճած է 1984-էն ի վեր: «Զինացիները պէտք է կատարեալ յիմար ըլլան, որպէսզի չհասնին ԱՄՆ-ին», կ'ըսէ ան:

Թէ ինչպէ՞ս կրնայ արձագանգել ԱՄՆ Զինատանի այս վերելքին:

Տալիոյի խօսքով՝ ԱՄՆ դուցէ պատժամիջոցներ կիրառէ Զինատանի դէմ: Բաց աստի, ԱՄՆ կրնայ փորձել խափանել ներգրուումներն ու ձեռնարկատիրութիւնները Զինատանի մէջ:

«Զինական ապրանք գնելը կամ նոյնիսկ Զինատանի մէջ գործընկեր կարելի է նոյնացնել ուսական ապրանք գնելու

հետ: Այսինքն կայ իրաւախախտում մը: Սա կը վնասէ թէ՛ երկրներուն եւ թէ՛ ամբողջ աշխարհին, որովհետեւ Զինատան սերտօրէն կապուած է այլ պետութիւններու հետ: ԱՄՆ-ի արդիւնաբերական արտադրանքի 22 տոկոսը կը ներածուի Զինատանէն», դիտել կու տայ ան:

Թէեւ պատժամիջոցներու մասին կը խօսուի, սակայն, անոնք անկարող են լուծել բոլոր խնդիրները: Յամենայնդէպ, սա ԱՄՆ-ի միակ զէնքն է: Տալիո ուղադրութիւն կը հրաւիրէ նաեւ այլ ուղղութեան մը վրայ. «Առայժմ, նոյնիսկ մեղի համար ամենահաճելի զնահատականներով, Ռուսաստանի ՀՆԱ-ի անկումը չի գերազանցեր 15 տոկոսը: Սա քիչ է, բնակչութիւնը կը դիմանայ: Վլատիմիր Փութին

իշխանութեան գլուխ մնալու պիտի դժուարանայ, երբ այդ անկումը հասնի 40 տոկոսի սահմաններուն»:

Ըստ Տալիոյի՝ այդ պատժամիջոցներէն կը տուժէ նաեւ արեւմուտը: «Միւս պետութիւնները յարձակողական կերպով կը ձեռնարկեն Ռուսաստանի բաժնետոմսերէն, որովհետեւ կը վախնան, թէ իրենց հետ վարուի այնպէս, ինչպէս Ռուսաստանի հետ: Սա կը փոխէ ուժերու յարաբերակցութիւնը ամբողջ աշխարհով», կը մտանշէ ամերիկացի միլիտանտները:

Թէ ինչպէ՞ս պիտի ըլլայ նոր աշխարհակարգը: Ըստ Տալիոյի ամէն ինչ ինծի կը յիշեցնէ 1938 եւ 1939 թուականները, երբ աշխարհը Երկրորդ համաշխարհային պատերազմի շնորհիւ էր:

հետեւեալ կերպով: Այս երկրները կրնայ աշխարհի Ռուսաստանի տնտեսութեան, եթէ արեւմուտքը պոքրօթի ենթարկէ զայն: Ամէն պարագայի, համաշխարհային նախադէպը կ'ըսեն, որ արեւմտահայերէնը անուարարային սահմանափակումներով եւ գրամազրուելի ազատ տեղաշարժով մոտացութեան մատնուած է:

Ռէյ Տալիոյի կանխատեսումներով՝ պէտք չէ աւանդները կանխիկ ներդնել դրամատնային հաշիւներու մէջ կամ բաժնետոմսերու: Ըստ էութեան, այսպէսով գումարը ներգրուած կ'ըլլայ ուրիշներու պարտքերու մէջ: Տոկոսները չեն ծածկեր զնաճը: Ինքնախաբէութիւն է բաժնետոմսերը կամ կանխիկ գումարը՝ որպէս ներդրման յուսալի միջոց համարելը, որովհետեւ անոր համար պէտք է վճարել իրական բացասական տոկոսով, այսինքն գումարի գնողունակութեան նւազմամբ:

Երկրորդ՝ աւանդները պէտք է կառավարել զանազան ներդրումային մեթոտներով եւ տարբեր երկրներու մէջ: Ամերիկացի միլիտանտները կ'ըզգրակացնէ.

«Ես երբեք բանի կը նայիմ: Այն երկրները, որոնք աւելի շատ կը շահին՝ քան կը ծախեն, այսինքն ունին՝ կոշտ պիւտճէ: Յետոյ, ինչ քաղաքական իրավիճակ կայ այնտեղ: Համագործակցութեան մշակոյթ կ'այ, թէ մարդիկ իրարու կողմը կը սեղմեն: Ինչ վտանգ կայ, որ երկրորդ ներքաշուի պատերազմի: Այն երկրները, ուր ես կը ցանկամ ներգրուումներ կատարել, ունին ողջամիտ բնակչութիւն եւ ամենակարեւոր՝ չեն փափաքիր պատերազմի»:

- վերջ -

Երեւան

ԱՆԺԵԼԻՆԱՆ...

ԱՆՈՒՇ ՆԱԳԱՇԵԱՆ

Սակայն, ուրիշ էր Աստուծոյ ծրագրերը...

1948 թուականի մարտի 15-ին սկսաւ արաբ-հրեայ պատերազմը: Նամակները դադրեցան: Երկար ժամանակ լուր չունէին: Հայրը այդ ընթացքին արտի կաթիլաձով մահացաւ: Մայրը եղբայրներուն հետ Յորդանան գնաց: Մենք ալ պիտի երթայինք, բայց Հայրս վերջին վայրկեանին քսաւ. «Ես մօրդ գերեզմանը չեմ ձգեք»: Պատերազմը իր աւելի գործեց, մեր տունը շատ վտանգաւոր տեղ մըն էր, ոււմը մը ինկաւ եւ վրտակի եղաւ, բարերախաբար Յորդանան երթալու համար պատրաստած պայուսակներն քանի մը հագուստով եւ պէտք եղող պղտիկ իրերով առինք եւ աւելի ապահով տեղ մը փոխադրուեցանք: Այդ քանի մը իրերուն մէջ հետո առած էի նաեւ հարսանեկան հագուստս:

Նոր սահմաններ գծուեցան, ով ո'ր կողմը մնաց չեմ գիտեր: Պատերազմէն ետք դրեմք նամանակ մնացին անպահպաններ... Իսկ արդեօք իր նամակները հասցեագրուած էին արդէն գոյութիւն չունեցող տան հասցեով՝ այդ մընաց չանկուով:

Պատերազմ... Ո՛վ կը շահի պատերազմէն, ոչ յաղթողը, ոչ պարտուողը...

Իսկ ես՝ կորսնցուցի սէրս... Աշխարհ:

Այն նոյն աշխարհը, որ քանի մը ամիս առաջ դրախտ կը թուար ինծի՝ վերածուեցաւ դժոխքի:

Հայրս երկար չապրեցաւ, մօրս կողքին թաղեցի եւ ամէն օր գրագրաւ երթալու տեղ՝ գերեզման այցելեցի:

Մօրս ոսկիները ծախելով՝ պղտիկ տուն մը վարձեցի եւ սկսայ անգլերէնի անձնական դասեր տալ, յետոյ դպրոցէ մը առաջարկ եկաւ: Առաջին ամսականովս մէկ փողով յատուկ պահարան մը ապաւրեցի միայն մէկ հազուստի համար եւ հարսանեկան հագուստս խնամքով կ'ախեցի անոր մէջ, օճառներ գետնեղելով պահարանին ամէն մէկ անկիւնը, տարին անգամ մըն ալ դուրս հանելով, որպէսզի օդ առնէ... Եւ պատումով ապրեցայ երեսունհինգ տարի:

Չկրցայ ուրիշ սիրել... Չկրցայ անձնական կեանքս դասաւորել... Տուն-գլորոց-գերեզմանատուն եռանկիւնին մէջ

անցան երեսունհինգ երկար տարիներ մինչեւ...

Ոտքերս դեղաբան առաջնորդեցին զիս այդ օրը, արտի տրոփումներ կ'ուներայի եւ ուղեցի դեղագործին հարցնել, թէ հանգստացնող ինչ դեղ կրնայ առաջարկել: Երբ դեղագործը տուփը ցոյց տուաւ բացատրելով՝ ինչպէս գործածեմ, չարքին մէջ ետեւս կեցող մարդը քսաւ:

-Տուի մըն ալ նոյն դեղէն ինծի համար բերէք, եթէ կարելի է:

Չայնը անցեալէն կու գար: Միտոս երեք պղծաւ արագ չէր տրոփած, դարձայ...

-Անժելինա...

Ինքն էր, ուրիշ ոչ ոք կըրնար այդպէս Անժելինա ըսել, ուրիշ աչքեր չէին կրնար այդպէս նայիլ ինծի... Ինքն էր, իր ամբողջ հմայքով...

Ինքն էր, սպիտակախառն մադրով... Միայն ինք կրնար այդպէս ալիկոծել սիրտս...

Պահ մը երկուքս ալ լուռ մնացին: Ակնթարթ մը, որ կարծես երեսունհինգ տարի ձգուեցաւ... Սպասումի յոգնած ծալտ մը գրծադրուեցաւ երկուքիս դէմքերուն եւ...

● շար. Դ. ԷՂ



ԵՐԶԻՒՐՄԱՆ ԱՆԳԱՐԱՅԻ ՄԷՋ

Անգարայի զեկավարութիւնը երկ հիւրընկալեց Հիւսիսային Կիպրոսի Թուրք Հանրապետութեան նորընտիր նախագահ Թուֆան Էրհիւրմանը: Այս վերջինը ընտրուելէ վերջ առաջին անգամ այցելեց Թուրքիա:

Պեշմեփէի համալիրէն ներս, Հանրապետութեան նախագահ Թեմալ Թայյիպ Էրտողան պետական բարձր արարողութեամբ դիմաւորեց Թուֆան Էրհիւրմանը: Զինուորական արարողութիւնէն վերջ, երկու զեկավարները ունեցան զրոյց մը:

Հիւսիսային Կիպրոսի Թուրք Հանրապետութեան վերջին ընտրութիւնները հանրային կարծիքին մօտ բաւական լայն արձագանգ ստեղծած էին: Ընտրութիւնէն յաղթական դուրս եկած Թուֆան Էրհիւրման, ըստ երեւոյթին, Անգարայի զեկավարութեան կողմէ առաջին հերթի վրայ նախընտրուած թեկնածուն չէր համարուեր: Յամենայնդէպ, ընտրութիւնէն վերջ Էրհիւրման շատ չինիչ եւ զբաւան պատգամներ կը հասցեագրէ Անգարային եւ երկկուսան հանդիպումներն ալ տեղի ունեցան համապատասխան միջոցառում մը մէջ:

TRIPP-ի ՇՈՒՐՋ ԻՐԵՐԱՄԵՐԺ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ



«CS+1» ձևաչափով գազաթափողովը Սպիտակ տան մէջ

Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիևը յայտնեց, որ «Ջանգեղուրի միջանցք»-ի բացումը պիտի նպաստէ Կեդրոնական Ասիոյ բոլոր երկրներուն:

Երբ Երևանի ղեկավարութիւնը կը փորձէ Պաքուին բացատրել, որ «Ջանգեղուրի միջանցք»-ը չի բխիր Ուսլիկիմիւրի մէջ ստորագրուած հռչակագրի ոգիէն ու տարբէն Իլհամ Ալիևը կը շարունակէ հաւատարմի մնալ նոյն խօսողիմիւր: Ան դիտել տուաւ, որ Ատրպէյ-ճանի մէջ ստեղծուած ժամանակակից երթուղային ենթակառուցումները՝ ներառեալ առևտրային նաւատորմը, «Ալաթ» միջազգային առևտրային նաւահանգիստը, որու հզօրութիւնը յառաջիկայ տարիներուն պիտի հասնի 25 միլիոն թոնի, Պաքու-Թիֆլիզ-Կարս երկաթուղին, ինչպէս նաև երկրի ինն միջազգային օդակայանները, այս բոլոր գործոնները կ'ամրապնդեն երկրի դերը՝ որպէս համաշխարհային երթուղային եւ լոգիստիք կեդրոն:

Ալիևի խօսքով՝ Էօպեքիստանի եւ Ատրպէյճանի միջև համագործակցութեան հիմնական ոլորտներէն մէկը բազմազան փոխադրութեան եւ լոգիստիք ենթակառուցումներու զարգացումն ու տարանջիկ հնարաւորութիւններու ընդլայնումն է: «Այս ոլորտէն ներս մեր երկրներու մասնակցութիւնը Միջին միջանցքի միջազգային փոխադրութեան երթուղիին ա-

ռանձնայատուկ նշանակութիւն ունի, որովհետեւ Ատրպէյճան կարեւոր տարանջիկ երկիր մըն է Էօպեքիստանի եւ Կեդրոնական Ասիոյ երկրներուն համար: Վերջին տարիներուն Միջին միջանցքով արտահանման հնարաւորութիւններու եւ բեռնափոխադրումներու աճը ձեռք բերած է առանձնայատուկ ռազմավարական նշանակութիւն», ըսաւ Ալիև:

Վերջերս, Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահ Տաւրիս Թրամփն ալ Սպիտակ տան մէջ, Ուսլիկիմիւր, հիւրընկալած էր Ղազախստանի, Նիւրըղ-դիստանի, Տաճիկիստանի, Թիւրքմենիստանի եւ Էօգպեքիստանի նախագահները: Այս երկրներու ղեկավարները «CS+1» ձևաչափով դիւանագիտական հարթակի շրջանակներէն ներս մտադրութիւն յայտնած են՝ ամրապնդելու համար մատակարարման շղթաներու կապն ու դիմադրունակողութիւնը: Այստեղ կը հետապնդուի լիովին իրացնել Անդրկասպեան առևտրային երթուղիի ներուժը եւ այդ մէկը կապել TRIPP-ին, որ պիտի անցնի Հայաստան-Իրան սահմանով: Պաշտօնական աղբիւրներու հաղորդումներով, «CS+1» երկրներու եւ համաշխարհային հանրութեան շահերուն տեսակէտէ կարեւորութիւն կը ներկայացնէ ապահովել բեռներու, տեղեկատուութեան եւ ուժանիւրի անվտանգ տեղաշարժը:

ՄԻՒՆԻԽԻ ՄԷՋ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Միւնիխի մէջ, Գերմանիա, բացուած է Միջազգային Ժամանակակից մշտալինքու արվեստի ցուցահանդէսը (FIDEM XXXVII), ուր իրենց աշխատանքները ներկայացուցած են աւելի քան 30 երկրի 350 արվեստագէտ: Սոյն ցուցահանդէսին ներկայացուած են նաև Հայազգի մետալագործ Գուրգէն Յակոբեանի աշխատանքները:

Ներկայացուած 500 աշխատանքը ամբողջացուած է «Մեր առասպելները» մեր արմատները» խորագրի ներքոյ: Աշխարհի զանազան երկրներէ ցուցադրուած աշխատանքները ընդհանուր երկխօսութեան մէջ են՝ արտացոլացնելով նաև ինքնատիպ բազմազանութիւն:

«Արմէնիփրէս»-ի հաղորդմամբ ցուցահանդէսին ներկայացուած են Գուրգէն Յակոբեանի երկու աշխատանքը: «Մետալները, որոնք ներկայացուցած են Միւնիխի ցուցահանդէսին, կը կոչուին «Դիցաբանական երազ»: Աշխատանքները որոշակի իմաստով համապատասխան են ցուցահանդէսի խորագրին: Այլաբանական, առասպելական եւ այժմեան կերպարներու համադրութիւնը զուգահեռուած է մետալի փոքր մակերեսի վրայ՝ հաղորդելով անցալի առերեսումը ներկայի հետ», ըսած է արուեստագէտը:

FIDEM-ը միջազգային մետալագործական դաշնակցութիւն մըն է, որ երկու տարին անգամ մը տարբեր երկրներու մէջ կը կազմակերպէ համաժողով եւ ցուցահանդէս: Գուրգէն Յակոբեան FIDEM-ի անդամն է ու ներկայացուցիչը Հայաստանի մէջ: Ան ունի մետալագործական արուեստի գծով ստեղծագործութիւններ՝ նուիրուած հայ յորինողներուն, ինչպէս՝ Նուրադ Միրզոյեան, Տիգրան Մանսուրեան, Առնօ Բարաջանեան եւ այլք:

Միւս կողմէ, Միւնիխի մէջ բացուած Միջազգային Ժամանակակից մետալի արուեստի ցուցահանդէսը բաց պիտի մընայ մինչև 2026 թուականի յունուարի 25-ը:



Գուրգէն Յակոբեան



Արուեստագետի ցուցադրուած ստեղծագործութիւնները

ՎԵՐԱՆՈՐԴՈՒՄ

● շար. Բ. Էջէն

Ներկայացնէ դէպքեր՝ համոզելու համար, որ Աստուած միշտ կը կատարէ Իր խոստումը եւ կը փոխէ մարդուն կեանքը եւ կ'առաջնորդէ ճիշդ ճանապարհի վրայով: Ան յատկապէս կը շեշտէ այն դէպքերը, երբ Յիսուս Քրիստոս մեղքերու թողութիւն եւ քաւութիւն կու տայ այնպիսի մարդոց՝ որոնք ընդհանուր կարծիքով յաւէտ կորսուած կը համարուէին:

Արդարեւ, մարդկային ընկերութեան փոփոխութիւնը կը սկսի մարդուն վերափոխմամբ: Մինչև մարդը չփոխուի՝ անհնարին է կերտել նոր ընկերութիւն...

- Տքթ. Գէորգ Նըրսիսեան, Գրիգոր Նարեկացիի հոգեւոր զարթոնքի եւ արթնութեան մասին:

Նոյեմբեր 13, 2025, Իսթանպուլ

ՍՐԲԱԶԱՆՆԵՐՈՒ ԴԷՄ ՎՃԻՌՆԵՐ

Հայաստանի դատական իշխանութիւնները կը շարունակեն երկարաձգել բանտարկեալ բարձրաստիճան եկեղեցականներու կայանքի ժամկէտները: Երկրէն ներս յառաջացած իշխանութիւն-եկեղեցի հակադրութեան պայմաններուն ներքեւ՝ դատական իշխանութիւններու քայլերը տպաւորութիւն կը ստեղծէ, թէ համապատասխան գործերը քաղաքական բնոյթ կը կրեն:



Երէկ, Երևանի ընդհանուր իրաւասութեան քրէական ատենանք որոշեց եւս երեք ամիս ժամկէտով երկարաձգել Տ. Բաքրաստ Արք. Պալատանեանի բանտարկութեան ժամկէտը: Նորին Սրբազնութիւնը այս տարի յունիսի 26-էն ի վեր բանտարկուած կը գտնուի: Անոր մեղադրանք առաջադրուած է՝ ահաբեկչութեան, զանգուածային անկարգութիւններ եւ իշխանութեան դաւթում նախապատրաստելու պնդումներով: Տ. Բաքրաստ Արք. Պալատանեան կը վերսէլ իրեն դէմ հասցէագրուած ամբաստանութիւնները, որոնք կը համարէ քաղաքական հետապնդման դրսեւորում:

Միւս կողմէ, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայէլ Արք. Աջապահեանի պաշտպաններու խումբն ալ Հայաստանի Վերաբնիշտեանին մօտ բողոքարկեց՝ առաջին ատենի դատարանին կողմէ արձակուած վճիռը, որով Նորին Սրբազնութիւնը երկու տարուան ազատազրկման դատապարտուած էր: Փաստաբանները Վերաբնիշտեանի դատարանին խնդրած են ամբողջութեամբ բեկանել դատավճիռը եւ կայացնել նոր դատական գործ մը՝ ճանչնալ ու հռչակելու համար Տ. Միքայէլ Արք. Աջապահեանի անմեղութիւնը:

ԱՆԺԵԼԻՆԱՆ...

● շար. Ա. Էջէն

լուծութիւն, իրարու սրտերուն զարկերը կը լսէինք: -Անժելինա... կրկնեց ան: Անուսն իր շրթներէն կը գերազանցէր ձայնն երգ...

-Միքայէլ, ձայնդ երբեք չէ փոխուած, աչքերդ նոնն են, արդեօք ք... -Այնքալ չէ փոխուած Անժելինա, սէրս նոյնն է, ինչպէս որ դուս նոյն հրեշտակային աղջիկն ես...

Ժամանակը պարզապէս ստիպած էր լուս մնալ, բայց չէր կրցած մարել սիրոյ կրակը, անոնք երբեք չէին դադրած սիրելէ: Սպասումի երեսունհինգ տարիները լուծուեցան վայրկեանի մէջ:

Միքայէլը այդ առտուն հասած էր Ամերիկային: Նամակները անպատասխան մնացած էին, մայրը իր եղբայրներուն հետ Յորդանանէն Ամերիկա արտագաղթած էր, ինչ ալ միացած էր անոնք:

-Անժելինա, մի՛նք զոհ դացինք պատերազմին, բայց ո՛չ մեր սէրը: Քեզի համար եկած են, դեռ ուշ չէ ամուսնութեան:

Անժելինան չի պատասխաներ, այլ Միքայէլին իր սենեակը կը տանի ու կը բանայ միափեղկ պահարանը: Հարսանեկան հագուստը իր հետ սպասեր էր իր սրտի գահակալին:

Երեսունհինգ տարի անց իսկական սէրը իր պատասխանը պիտի չգտնէր դեղարանին սիրտ հանգստացնող դեղերուն մէջ, այլ սիրող աչքերուն եւ սպասող սիրտերուն մէջ:

-Տասնեհինգ երջանիկ տարիներ ապրեցանք միասին... Այո՛, ապրեցանք, որովհետեւ ապրիլը տարիներու հաշիւին մէջ չէ, այլ միասին երջանիկ ապրելուն մէջ... Եւ մենք ապրեցանք տասնեհինգ հեքիաթային տարիներ:

Անժելինա՛, հեքիաթի սպասող իշխանուհի՛՝ անունդ հրեշտակային նօթ մը ունի, որ միայն Միքայէլը կրնար երգել...:

● շար. երէկի թիւէն եւ վերջ

երուսաղէմ, 2025

«ՁՈՒՆԿ ՎՈՆԿ» ՓՈԹՈՐԻԿԸ



Թայուանի մէջ «Ձունկ Վոնկ» արեւադարձային փոթորիկէն յետոյ կը շարունակուին փրկարարական եւ վերականգնողական աշխատանքները: Փոթորիկը հարուածած է կղզին չորհրդաբաժնի երեկոյան՝ յառաջացնելով ուժեղ ջրհեղեղներ եւ սողանքներ, որոնց հետեանքով վերաւորուած է շուրջ 95 հոգի:

«Արմէնիփրէս»-ի հաղորդմամբ՝ աւելի քան 8500 բնակիչ հետեանքով է ափամերձ եւ ինքնային շրջաններէ՝ հաւանական տեղումներու պատճառաւ: Աղէտի էփեկեղորոնին յայտնուած է Թայուանի հիւսիսի իլան շրջանը, ուր մրցանիշային տեղումներ եղած են: Փոխադրութիւնը ենթարկուած է լուրջ խափանումներու: Մի քանի հազար տնային տնտեսութիւններ մնացած են առանց երկաթուղանութեան: Զրհեղեղներու հետեանքները վերացնելու աշխատանքներու ընթացքին ներգրաւուած է մեծաքանակ թեքնոլոգի: Թայուանի մէջ յորդառատ անձրեւները յաճախակի ջրհեղեղներ կը յառաջացնեն, բերեմի Նուրի մակերեսի շատ բարձր կըլլայ: Աւելի վաղ «Ձունկ Վոնկ» գերբիթորիկը հարուածած էր Փիլիպինները՝ յառաջացնելով աղէտային ջրհեղեղներ: 27 հոգի մահացած էր, իսկ աւելի քան մէկ միլիոն բնակիչներ ստիպուած լքած էին իրենց տունները:

ՄԻՐԶՈՑԵԱՆ ԹԻՖԼԻԶԻ ՄԷՋ



Միրզոյեան եւ Պոչոքիշվիլի

Հայաստանի արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեան այսօր չփումներ կ'ունենայ Թիֆլիզի մէջ, ուր բանակցութիւններ կը վարէ Վրաստանի արտաքին գործոց նախարար Մաքա Պոչոքիշվիլիի հետ: Բանակցութիւններուն զուգահեռ՝ նախարարները յայտարարութիւններով հանդէս կու գան զանգուածային լրատուութեան միջոցներուն համար:

Պաշտօնական աղբիւրներու հաղորդումներով՝ Արարատ Միրզոյեան Թիֆլիզի մէջ կ'ընդունուի նաև Վրաստանի նախագահ Միխէյլ Բաւելաշվիլիի, վարչապետ Իրակլի Գոպախիձէի եւ խորհրդարանի նախագահ Նալիա Փափուաշվիլիի կողմէ: Ան ծաղիկաբուսակ մըն ալ կը զետեղէ՝ Վրաստանի միասնութեան համար զոհուած հերոսներու յուշարձանին:

Պաշտօնական այցելութեան ընթացքին նախարարները կը քննարկեն Երևան-Թիֆլիզ ռազմավարական գործընկերութեան օրակարգը, երկու հարեաններու յարաբերութիւններու ընթացքը եւ տարածաշրջանային համագործակցութիւնը:

ՈՒԺ ԵՒ ԱՅԼԱՍՏԵՐՈՒՄ

● շար. Բ. Էջէն

թիւնը կը փորձէ մարդը, ինչպէս ոսկին՝ կրակը»: Ոսկին կը մաքրուի, թէ՛ զիմանայ բոցին: Ունաք ծնած են լոյսի համար, բայց կ'ընտրեն մութը, որովհետեւ մութը աւելի դիւրին կը ծածկէ իրենց դէմքը:

Ուժը առանց սիրոյ կը դառնայ բռնութիւն, իսկ սէրը առանց արդարութեան՝ կուրծքի մարտ: Արդար ուժը կը պահանջէ սիրտ մը, որ գիտէ նաև ներքի, բայց առանց մոռնալու: Այդ է յաղթանակը. ո՛չ թէ զօրաւոր ըլլալ, այլ ազնիւ մնալ:

Մարդը վերջին անգամ աչքերը փակելն առաջ պէտք է հարցնէ՝ «որքա՛ն տիրեցի», այլ «ի՛նչ թողեցի ետքս»: Ուրեմն ամենէն մաքուր ուժը այն է, որ կը ծառայէ ուրիշներուն: Որովհետեւ միայն ծառայելով կը մնանք մարդ: Իսկ ով որ կը մոռնայ այդ ճշմարտութիւնը, վաղ թէ ուշ կը դառնայ իր իսկ ուժի գերին:

Ուժ ունեցող մարդը երբ կը մոռնայ իր ուժին պատճառը, երբ կը սկսի տեսնել զայն որպէս իր էութեան արդարացումը, ան կը մթազնի: Այլապէս մոռնող կ'առնէ այն պահուն, երբ իշխանութիւնը կը դառնայ հաճոյք, ոչ թէ պատասխանատուութիւն: Ահա՛՝ այդ պահուն է, որ հոգին կը սկսի փոխի:

Բոլոր այս պատմութիւններուն մէջ մէկ բան կը կրկնուի՝ ուժը առանց չափի եւ առանց հոգեկան վարժանքի կը դառնայ թոյն: Մարդը պէտք է հասկնայ, որ ուժը ինքնին բարութիւն կամ չարութիւն չունի. բարին կամ չարը կը ստեղծուի այն ձեւով, թէ ինչպէս կը գործածուի այդ ուժը: Արդար գործադրուած ուժը կը դառնայ լոյս, իսկ անարդար ուժը՝ մութ:

Եւ վերջապէս՝ ուժը պէտք է ըլլայ ծառայութիւն, ոչ թէ տիրապետութիւն: Մարդը որքան կը բարձրանայ, այնքան պէտք է աւելի խոնարհի: Որովհետեւ միայն այդպէս կարելի է մնալ անաղարտ եւ միայն այդպէս կը պահուի մարդկային հոգին՝ ազատ այլասերումէ:

ՏԻԿԻՆ ԱՐԵՒԻ ՄՈՒՏԵԱՆԻ

● շար. Ա. Էջէն

ՎԵՐԱԿԵՆ ԴԱՆԱՑՄԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
Նկատի ունենալով սփիւռքի աւանդական Հաստատութիւններու կողմէ լուրջ ծրագրերու եւ երմտական պակասը՝ վերջին տարիներուն «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկը արեւմտահայերէնի ծրագրերու աւանդական կարեւոր հովանաւորներէն մէկն է եւ մեծ ազդեցութիւն ունի հիմնական հարցերու քննարկումներուն մէջ: Կիւլպէնկեանի տարբեր ծրագրերու օժանդակութիւնը՝ Գրական, Թուային կամ մանկավարժական, ձեւաւորած է արեւմտահայերէնի գործնական ուղղութիւն մը: Բայց եւ այնպէս, ինչպէս որեւէ միջամտութիւն՝ ոչ-բոլորը համակարծիք են Կիւլպէնկեանի տեսլաբն: Երբ լեզու մը ճշմարտամի մէջ է, նոյնիսկ բարի մտադրութեամբ օգնութիւնը կրնայ դառնալ վէճի պատճառ:

Արեւմտահայերէնի պայքարը միայն քերականութեան կամ բառապաշարի հարց չէ. ան ինքնութեան, պատկանելիութեան եւ գոյատեւման խնդիր է: Տիկին Արեւ տարեց է, բայց, կենդանի: Ան կը շարունակէ ապրիլ թէ՛ ԴՄԻ-ի մէջ, թէ՛ տունը խնամուող, թէ՛ առցանց ընկերացած: Ան կը շնչէ դատարաններու, թրահանութիւններու եւ աւելի ու աւելի՝ նոր սերունդի իրաւային աշխարհին մէջ:

Անոր ապագան կախեալ է ո՛չ մէկ խումբի «յաղթանակէն», այլ միասնական ձայնէն բոլոր ժառանգորդներուն՝ մարտիկներու, մտածողներու եւ երազողներու, որոնք պէտք է վերագտնեն տիկին Արեւ Մուտեանին միջոցով «խօսելու» եւ ստեղծագործելու կարողութիւնը:

(*) Ընկերաբան, սփիւռքագէտ, Սփիւռքի նորարարական ծրագրերու հեղինակ եւ գործադիր:

«Տարբերակ 21»